Շրջակա միջավայրի վրա ազդեցության Գնահատման հաշվետվություն

Արմավիրի մարզ Արմավիր քաղաքի Աշուղ Ջիվանու փողոց 12 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի

Պատվիրատու

<<Ալվինա բնակելի համալիր>> ՍՊԸ

Կատարող

<<Էկո գրուպ ԱՄ>> ՍՊԸ

Երևան 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 3
Ձեռնարկողի մասին տեղեկություն 3
1.1 Հապավումներ 3
1.2 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը 4
1.3 Նախատեսվող գործունեության բնութագիրը 7
1.3.1 Նախատեսվող գործունեության նկարագիր 7
էներգախնայողության և էներգաարդյունավետության հետ կապված միջոցառումներ 9
1.3.2 Նախատեսվող աշխատանքների կազմակերպում 15
1.3.3 Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ 15
1.3.4 Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ 16
1.3.5 Կադրային ապահովում և շինտեխնիկա 18
1.3.6 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում 20
2.ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ 23
2.1 ՖԻԶԻԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 23
2.2 Բնության հատուկ պահպանվող տարածքներ 26
1.4 Պատմամշակույթային հուշարձանների ցանկ 26
2.2 ԿԼԻՄԱՆ 28
2.3 Ջրային ռեսուրսներ 32
2.4 Հողերի նկարագիրը 33
2.5 Հիմնային աշխատանքներ 34
2.6 Կենսաբազմազանություն 34
2.6 Թափոնների կառավարում 36
3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ 38
3.1 ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ 38
3.2 ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ 39
3.3 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 39
3.3.1 ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ 39
3.3.2 ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 39
3.3.3 ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 40
3.3.4 ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ 42
3.3.5 ԱՂՄՈՒԿԻ և ԹՐԹՌՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ 44
4. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ 46
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ 48
ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ 51
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 49
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 50

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ձեռնարկողի մասին տեղեկություն

1.2 Ձեռնարկող՝	**<< Ալվինա բնակելի համալիր >> ՍՊԸ**
1.3 Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝	**Ք.Արմավիր, Թումանյան փող.36տ**
1.4 Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝	**Արմավիր քաղաքի Աշուղ Ջիվանու փողոց 12**
1.5 Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝	**Արմավիրի մարզ, Արմավիր համայնք**

1.1 Հապավումներ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամ ընկերություն

ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.2 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը նախատեսվում է Արմավիր քաղաքի Աշուղ Ջիվանու փողոց 12 հասցեում:

Գործունեության նպատակն է կառուցել ժամանակակից բնակելի համալիր:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա.» ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Բնակելի համալիրի աշխատաքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է նախատեսվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները, բնապահպանական ազդեցության գնահատման շրջանակը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Իրավական հիմքերը

Նախատեսվող գործունեության կազմակերպումն իրականացվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության (օրենքների և ենթաօրենսդրական ակտերի) այն պահանջներով, որոնք առնչվում են շրջակա միջավայրի պահպանության և մասնավորապես նախատեսվող գործունեության կարգավորման հետ: Դրանցից հիմնականներն են՝

1. ՀՀ Հողային օրենսգիրք (02.5.2001թ.),

2. ՀՀ Ջրային օրենսգիրք (04.6.2002թ.),

3. <<Թափոնների մասին>> ՀՀ օրենք (24.11.2004 թ.),

4. <<Վարչական իրավախախտումների մասին>> ՀՀ օրենք (07.02.2012թ.),

5. <<Մթնոլորտային օդի պահպանության մասին>> ՀՀ օրենք (01.11.1994թ.),

6. <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենք (21.06.2014թ),

7. <<Բնապահպանական վերահսկողության մասին>> ՀՀ օրենք (11.04.2005թ),

8. << Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենք (30.05.2001թ),

9. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման “Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում” N2 – III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին”

10. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 25 հունվարի 2010թ. N 01-Ն հրաման “Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին”

11. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 17 մայիսի 2006 թվականի N 533-Ն հրաման “Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին”

12. ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N 121-Ն որոշում,

13. ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին» N 430-Ն հրաման:

14. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006.),

15. «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.),

16. «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.),

17. ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում,

18. ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում,

19. ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում,

20. ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ա որոշում,

21. «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը հատատելու մասին» ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշումը:

22. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 6 մարտի 2002թ. N 138 հրաման “Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում” N2 – III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին:

23. ՀՀ քաղաքաշինության նախարարի հրամանը ՀՀՇՆ 22-04-2014 <<Պաշտպանություն աղմուկից>> Շինարարական նորմերն հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին:

1.3 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.3.1 Նախատեսվող գործունեության նկարագիր

ՀՀ, մարզ Արմավիր, համայնք Արմավիր Արմավիր քաղաք. Աշուղ Ջիվանու փողոց 12 հողամաս /կադաստրային ծածկագիր 04-001-0067-0030/ բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի նախագիծային առաջարկ: Դիտարկվող տարածքը իրենից ներկայացնում է 1.0201 հա մակերես զբաղեցնող՝ բարդ երկրաչափական ուրվագիծ ունեցող հողամաս: Նախագիծը մշակելիս հաշվի են առնվել ինչպես պատվիրատուի պահանջները, այնպես էլ դիտարկվող տարածքի երկրաչափական ուրվագիծը, հարակից տարածքների կառուցապատումը և նորմատիվային հեռավորությունները, տեղանքի ռելիեֆային առանձնահատկությունները: Բնակելի համալիրի 0.00 նիշը պայմանականորեն ընդունված է առաջին հարկի հատակի հարդարման վերին նիշով:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը բաղկացած է չորս՝«Ա», «Բ», «Գ» և «Դ» սեկցիաներից՝ կասկադաձև 15-16 վերգետնյա/նիշ. 0.00-57.30/ և 2 ստորգետնյա /նիշ. (-4.20) և (-8.10)/հարկերից:

Ըստ նախագծի «Ա» և «Դ» սեկցիաներում նախագծված է մեկական շքամուտք, իսկ «Բ» և «Գ» սեկցիներում երկուական շքամուտք: Յուրաքանչյուր շքամուտքում նախատեսված է թվով 2 վերելակ: Աստիճանավանդակների դռները նախատեսված են իրականացնել ինքնափակվող և հակահրդեհային: Բազմաֆունկցիունալ բնակելի համալիրի առաջին հարկում /նիշ. 0.00/ տեղակայված են հասարակական և կոմերցիոն սենքերը, վերգետնյա հարկերում բնակելի գոտիներ:

Բնակելի հարկի բարձրությունը /հարկից հարկ/ կազմում է 3.30 մ: Ստորգետնյա ավտոկայանատեղի հարկերի բարձրությունը, նախատեսված է իրականացնել 4.20մ, 3.90մ բարձրությամբ, որը հարկ եղած դեպքում կարող է ծառայել որպես պարզագույն թաքստոց: Հասարակական հարկի՝ առաջին հարկի /նիշ. 0.00/, բարձրությունը նախագծված է 4.50 մ.: Երկրորդ հարկի հատակի նիշը գտնվում է 4.50 մ բարձրության վրա, իսկ շենքի ամենաբարձր կետը գտնվում է 57.30 նիշում: «Ա» սեկցիայի կառուցապատման մակերեսը կազմում է 712.5 քմ, իսկ հարկայնությունը՝16 հարկ, «Բ» սեկցիայի կառուցապատման մակերեսը կազմում է 1128.6 քմ հարկայնությունը 15 հարկ, «Գ» սեկցիայի կառուցապատման մակերեսը կազմում է 1218.7 քմ հարկայնությունը 16 հարկ, «Դ» սեկցիայի կառուցապատման մակերեսը կազմում է 738.9 քմ, իսկ հարկայնությունը 16: Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի տիպարային հարկում նախագծված է 1-3 սենյականոց բնակարաններ: Տրանսպորտային միջոցների մոտեցումները դեպի դատարկ հողտարածք (բազամաֆունկցիոնալ բնակելի համալիր) նախատեսվում է իրականացնել տարածքի գոյություն ունեցող ճանապարհների միջոցով, ինչպես նաև նախագծվել է նոր

շրջադարձային միջբակային ճանապարհ, որը մոտեցում է ապահովում դեպի շենքի շքամուտքեր: Մուտքը դեպի ստորգետնյա ավտոկայանատեղի նախատեսված է իրականացնել «Ա» և «Դ» սեկցիաներին հարող թեքահարթակների միջոցով: Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի շենքերի տանիքը նախատեսվում է իրականացնել հարթ, ջրահեռացումը ներքին կազմակերպված: Համալիրի որմնախարիսխը նախատեսվում է երեսապատել բազալտե սալիկներով, իսկ ճակատային վերին հատվածը ըստ նախագծի նախատեսված է երեսապատել բաց և մուգ երանգի քարեսալերով:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի տարածքում նախատեսված են փոքր ճարտարապետական ձևերի իրականացում, տնկիների տեղադրում, բարեկարգում և կանաչապատում:

Կոնստրուկտորական առումով նախատեսված է իրականացնել կարկասային՝ մետաղյա, մոնոլիտ և հավաքովի, ինչպես նաև թեթև շինարարական նյութերի կիրառմամբ:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար ձեռնարկվել են համապատասխան սալիկապատված հարթ և թեք ճանապարհներ և միջոցառումներ՝ դեպի բնակելի և հասարարական տարածքներ:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներ՝

- Հողամասերի մակերես 10201 քմ,
- Կառուցապատման մակերեսը 3767.6 քմ / 36.9%/
- Կանաչապատման մակերեսն է 4300,1 քմ / 42.1 %/
- Անջրանցիկ մակերես 2133.3 քմ /21%/;
- Բնակարանների քանակ 528
- Ավտոկայանատեղերի քանակ 304

- Հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի,
- գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման:
- գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Տարածքում կիրականացվի սիզամարգի ցանքս կտկվեն ծառեր և թփեր:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում:

Բնակելի շենքի խոհանոցներից, ս/հանգույցներից և լողասենյակներից օդափոխությունը նախատեսված է բնական՝ օդատարերով, որոնք բարձրանում են հորանի մեջ:

Օդատարերի վրա յուրաքանչյուր հարկի առաստաղի տակ նախատեսված է կարգավորիչ ճաղավանդակ:

Ավտոկայանատեղում նախագծված են մեխանիկական դրդմամբ ներածման և

արտածման օդափոխության համակարգեր: Ներածման և արտածման համակարգերի սարքավորումները տեղադրված են հարկի առաստաղի տակ:

Օդափոխության համար օգտագործվել են կոմպակտ համակարգեր, որոնք

անհրաժեշտության դեպքում կարող են փոխարինվել նույն պարամետրերով այլ համակարգերով:

Ներածումը և արտածումը կատարվում է կարգավորող ճաղավանդակների միջոցով:

Հասարակական հարկի ջեռուցման և օդափոխության համակարգերի նախագծումը կկատարվի ճարտարապետական լուծումներից հետո:

Շենքի բնակելի մասի միջանցքներից և ավտոկայանատեղերից իրականացվում է ծխահեռացում:

Ծխահեռացման օդամուղերը տեղակայված են տանիքի վրա:

Հրդեհի ժամանակ վերելակների հորաններում և ավտոկայանատեղի վերելակների հորանի և աստիճանավանդակի նախասրահներում նախատեսված են դիմհարման համակարգեր:

Հակահրդեհային օդամուղների գործարկումը կատարվում է հրդեհային ազդասարքից և հեռակակենտրոնական վահանակից: Ավտոկայանատեղերում նախատեսված է ներածման և արտածման մեխանիկական համակարգեր: Արտածման համակարգերը համակցված են ծխահեռացման համակարգերի հետ: Ստորգետնյա ավտոկայանատեղերում յուրաքանչյուր հարկի համար օդափոխման համակարգը առանձին է: Օդափոխությունը իրականացված է վնասակար գազարտանետումների նոսրացման և հեռացման համար:

Բնակարաններում օդի արտածումը իրականացվում է սանհանգույցներից և խոհանոցներից իսկ ներածումը իրականացվում է պատուհանների միջոցով: Սանհանգույցներում նախատեսված են առանցքային օդամղիչներ: Խոհանոցներում նախատեսված են օդահեռացման երկու առանձին համակարգեր, մեկը՝ բնական, մյուսը՝ մեխանիկական, որը միանում է օջախի վրա տեղակայված քարշիչ պահարանին:

<u>Էներգախնայողության և Էներգաարդյունավետության հետ կապված միջոցառումներ</u>

Համալիրի էներգաարդյունավետությունը նախատեսվում է համապատասխանեցնել ՀՀ կառավարության 12.04.2018թ. N426-Ն որոշմամբ սահմանված չափորոշիչներին, ինչի ուղղությամբ իրականացվելու են համալիր միջոցառումներ, որոնց թվում են երեսպատման համակարգը, բարձր էներգաարդյունավետությամբ պատուհաններ և վիտրաժներ, տանիքի և ստորգետնյա հարկի ջերմամեկուսացում:

Ջերմության խնայողության համար ընտրված են ջերմաօգտհանիչներով օդի ներածման համակարգեր, որոնք ապահովում են ջերմության բարձր խնայողություն:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Քաղաքացիական պաշտպանության ու արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումների կազմակերպման նպատակով նախագծվող բազմաբնակարան բնակելի շենքերի ստորգետնյա հարկերը ունեն երկակի գործառնական նշանակություն՝ խաղաղ պայմաններում կշահագործվեն որպես ավտոկայանատեղի, իսկ ռազմական դրության պայմաններում որպես պարզագույն թաքստոց:

Նախատեսվում է նաև վթարային լուսավորության համակարգ: Թաքստոցում գտնվելու ժամանակահատվածում մարդկանց նվազագույն կենցաղային կարիքները ապահովելու համար նախատեսված է օդափոխության, ջրամատակարարման, ջրահեռացման վթարային լուսավորության համակարգ:


ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ 1 - 2000
1 : 2000
ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆԱԳԻԾ
ԴԻՏԱՐԿՎՈՂ ՏԱՐԱԾՔ
ԴԻՏԱՐԿՎՈՂ ՏԱՐԱԾՔ


ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ 1 -500
1 : 500
Գ-Ի ՄԱՍՆԱՇԵՆՔ
Դ-Ի ՄԱՍՆԱՇԵՆՔ
Բ-Ի ՄԱՍՆԱՇԵՆՔ
Ա-Ի ՄԱՍՆԱՇԵՆՔ
ՍԱՀՄԱՆ
ՆՈՐ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԹԵՔԱՀԱՐԹԱԿ
0068
ՁԻՎԱՆԻ ՓՈՂՈՑ
ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆԵՂՐ
ՀԱՍՑԵ՝ ՄԱՐԶ ԱՐՄԱՎԻՐ, ՀԱՄԱՅՆՔ ԱՐՄԱՎԻՐ ԱՐՄԱՎԻՐ Ք. ԱԶՈՒՄ
ՁԻՎԱՆՈՒ ՓՈՂՈՑ 12 ՀՈՂԱՄԱՍ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ
1. ՀՈՂԱՄԱՍԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍԸ / 10201 (ՔՄ) (100%)
2. ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍԻ -3767.5 ՔՄ(36.9 %)
3. ԱՆՇԱՐԺԱՇԻԿ ՄԱԿԵՐԵՍ ՔՄ.
ԻԻՆՈՒԹՅՈՒՆ - 3767.6 ՔՄ (36.9 %)
ԸՆԴՀԱՆՈՒՐ- 5900.9 ՔՄ(57.9 %)
ՏԱՆԱՊԱՐԿԵՐ - 1659.4 ՔՄ(16.3 %)
ՍԱՀՄԱՆՔՆԵՐ - 473.9 ՔՄ(4.7 %)
4. ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍ ԲՈԼՈՐ ՀԱՐԿԵՐԸ ՆԵՐԱՌՅԱԼ - 77100.3 ՔՄ
5. ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍ / - 4302.1 ՔՄ (42.1 %)

Արմավիրի մարզ
Քաղաք Արմավիր
Հատված կադաստրային քարտեզից
Կադաստրային ծածկագիր՝ 04-001-0067-0030
Մասշտաբ 1: 2000

Կադաստրի կոմիտե

Կոորդինատներ		
	X	Y
1	8417986.3994	4446639.5965
2	8417997.4888	4446659.1751
3	8417996.5759	4446659.7001
4	8417998.0522	4446662.1965
5	8418001.2122	4446667.7620
6	8417984.9506	4446676.9950
7	8417973.1239	4446683.7099
8	8417931.3827	4446707.4095
9	8417921.9909	4446712.7419
10	8417897.4069	4446670.3519
11	8417893.5941	4446663.7776
12	8417889.6809	4446657.0302
13	8417886.1691	4446650.9748
14	8417873.2758	4446628.7430
15	8417866.2522	4446616.6323
16	8417858.3256	4446602.9645
17	8417885.1185	4446587.4448
18	8417898.1020	4446579.9331
19	8417898.0860	4446579.9053
20	8417883.3669	4446554.3098
21	8417889.0900	4446551.0200
22	8417898.8100	4446567.9200
23	8417903.7498	4446576.5087
24	8417914.1477	4446570.5244
25	8417918.0499	4446568.2787
26	8417918.3853	4446568.8613
27	8417929.2137	4446587.6961
28	8417925.3127	4446589.9394
29	8417931.0456	4446599.9085
30	8417947.0979	4446627.8221
31	8417951.5685	4446625.2511
32	8417953.1717	4446624.3292
33	8417956.5508	4446622.3860
34	8417960.1718	4446620.3037
35	8417971.5439	4446613.7639
36	8417977.9249	4446624.8600

սպասարկման գրասենյակ Կ.Տ

Շինարարական մոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակացույց

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է համաձայն (N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում կետ 111, 113) ՍՆԻՊ 1.04.03-85* մաս II, հետ և հիման վրա հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը: Օբյեկտի ընդհանուր կոմպլեքսի շինարարության նորմատիվ տևողությունը ծրագրվում է 1095 օր շինարարական աշխատանքների կատարման համար թույլատրման տրամադրման օրվանից:

1.3.2 Նախատեսվող աշխատանքների կազմակերպում

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շինմոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Բոլոր տիպի շինմոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից:

Շինհրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից տրված հրահանգներով:

Շինհրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ զերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:

Հետիոտների անվտանգությունը ապահովելու նպատակով շինհրապարակը անհրաժեշտ է ցանկապատել թիթեղով:

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում:

1.3.3 Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ

Շինարարությունը ենթադրվում է իրականացնել կապալային եղանակով: Գլխավոր կապալառու կազմակերպությունը որոշվելու է մրցույթով:

Մասնաշենքերի միացումը արտաքին ինժեներական ցանցերին կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Շենքերի, ավտոճանապարհների, հրապարակների և մայթերի կառուցումը կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունը կարելի է իրականացնել ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և

մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, վարձակալել դրանք այլ կազմակերպություններից:

Ժամանակավոր շինությունների, վերամբարձ կռունկի, պահեստավորման մակերեսների տեղակայումը պատկերված է շինարարական գլխավոր հատակագծի վրա:

Առաջարկվում է հնարավորինս օգտագործել գույքային շարժական շինություններ:

Ժամանակավոր շինությունների ցանկը և դրանց տեղակայումը ցանկալի է լրացուցիչ ճշտվեն տեղում և համաձայնեցվեն պատվիրատուի հետ:

1.3.4 Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռանարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շաղախը և բետոնը կառաքվեն Արմավիր քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի աշխատանքների անընդհատությունը:

Առաջարկվում է շինարարության նյութատեխնիկական մատակարարման հետևյալ սխեման.

- Առանձին ամրանային ձողերը և հիմնակմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով բերվում են անմիջականորեն շինարարական հրապարակ, որտեղ կատարվում է դրանց պահեստավորում և տեղադրում,
- Բետոնային խառնուրդը միաձույլ բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների համար, ինչպես նաև շաղախը շարվածքի համար առաքվում են անմիջապես շինհրապարակ ավտոբետոնախառնիչներով և շաղախատարներով,
- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումը իրականացվելու է շինհրապարակից դուրս մասնագիտացված կետերում: Տարածքում քսայուղեր և վառելանյութ չի պահեստավորվելու :

Շինարարությունը կիրականացվի մասնագիտացված կազմակերպության կողմից :

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Աշխատանքների բնույթից ելնելով՝ բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի, աշխատանքների ընդհանրացված փուլի« կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների« աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ« կոշիկ)« համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում« լուսավորում« օդափոխում« պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն)« սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան

Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի« արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման« հրահանգման ժամանակին և որակով անցկացման« անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման« արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

1.3.5 Կադրային ապահովում և շինտեխնիկա

Շինարարությունում աշխատողների ընդհանուր թիվը՝ 68 մարդ, որից

Ինժիներատեխնիկական անձնակազմ - 3 մարդ

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է ստորև:

Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ

№ п/п	Անվանում	Մակնիշ	Քան.	Ծանոթություն
1	Ավտոկռունկ	КС-45717К-1	1	կամ համարժեք
2	Բետոնամղիչ ավտոմոբիլ	55111-070	1	ըստ պահանջի
5	Ինքնաթափ ավտոմոբիլ	КамАЗ-5511	2	կամ համարժեք
6	Էքսկովատոր Hyundai	3323	1	կամ համարժեք
7	Էլ. եռակցման սարք	СТН 500	1	կամ համարժեք
8	Շարժական կոմպրեսոր	ЗИФ - 55 В	1	ըստ պահանջի
9	Աշտարակային կռունկ	TEREX CTT 321-16H20	1	կամ համարժեք

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը կիրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ մասնագիտացված սպասարկման կետերում: Այն տեխնիկական միջոցները որոնք հնարավոր չէ մոտեցնել մասնագիտացված սպասարկման կետեր կսպասարկվեն մասնագիտացված ընկերությունների կողմից շինարարական հրապարակում հատուկ տեխնիկական միջոցների կիրառմամբ որոնք կբացառեն հողային ռեսուրսների հնարավոր աղտոտումը:

1.3.6 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ եւ այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ եւ կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր եւ այլն: Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի եւ ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաեւ շինարարական անձնակազմի խմելու եւ կենցաղային նպատակների համար:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, կենցաղային աղբն է օրեկան մեկ մարդու հաշվարկով 7կգx68x36/1000=17.1 տ և շինարարական աղբն է 240 խմ ծավալով: Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից:

Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

a) **$W_{խ.տ.}$= (n x N + n_1 x N_1) x T,** որտեղ

b) **n –** ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 3 մարդ

c) **N–** ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

d) **n_1–** սպասարկող աշխատոների թվաքանակն է՝ 65 մարդ

e) **N_1** – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

f) **T** – աշխատանքային օրերի թիվն է՝ 1095 օր

g) **$W_{խ.տ.}$=** (3 x 0.016 + 65 x 0.025) x 1095 = 1832 խմ/շին. ժամ:

Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

h) **$Մ_1$ = S_1 x K_1 x T,** որտեղ՝

i) **S_1** – ջրվող տարածքի մակերեսը, 4000 քմ,

j) **K_1** – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 խմ,

k) **T** – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 540

l) **$Մ_1$** = 4000 x 0.0015 x 540 = 3240 խմ.շին.ժամ.

Անիվների լվացման և ջրալցման ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

m) $Մ_2 = S_2 \times K_2 \times T$,

n) որտեղ՝ S1 – լվացվող ավտոմեքենաների քանակը, 15 հատ,

o) K1 – միավոր ծախսը 1 ավտոմեքենայի համար, 0.14 խմ,

p) T –ժամանակահատվածը օրերով, 1095

q) $Մ_2 = 15 \times 0.14 \times 1095 = 2299,5$ խմ/շին. ժամ

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 7372 խմ/շին. ժամ:

Բազմաբնակարան բնակելի շենքի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի միանալով <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ ցանցին, որի համար սահմանված կարգով ստացվել է տեխնիկական պայման և լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ: Ջրամատակարարումը հնարավոր է իրականացնել Իսահակյան փողոցով անցնող d=500մմ բաժանարար հանգույցից և Ա.Ջիվանու փողոցից անցնող ջրատարից, կոյուղին՝ հնարավոր կլինի միացնել Երևանյան փողոցով անցնող d=700մմ կոյուղատարին:

Շինարարության փուլում ջրցանման համար ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով, այդ նպատակով պայմանագիր կնքելու համար փաստաթղթերի փաթեթը կներկայացվի ոլորտի լիազոր մարմին կամ պայմանագիր կկնքվի համապատասխան մատակարար կազմակերպության հետ (նշված գործընթացը հնարավոր կլինի կազմակերպել շինարարության թույլտվության ստացումից հետո):

Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ (Բիոզուգարանի աշխատանքը հիմնված է բիոլոգիական ակտիվ հեղուկի ազդեցությամբ, որը քայքայում է թափոնները, վերացնում է միկրոբներին և չեզոքացնում հոտերը: Բիոզուգարանները պայմանագրային հիմունքներով սպասարկվում են այն ընկերության կողմից, որը մատակարարել է բիոզուգարանները), խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը 6205 կՎԱ հզորությամբ և 10 կՎ լարմամբ կիրականացվի 110/35/10 Արմավիր և 110/10 կՎ Ուրարտու ենթակայաններից: Միացման կետը 110/35/10 Արմավիր ե/կ 10կՎ ԲՍ-ի երկրորդ հատոնից:

Համալիրում նախատեսվում է իրականացնել անհատական օդափոխման և ջեռուցման համակարգ որոնց արտաքին բլոկները նախատեսվում է քողարկել հատուկ դրանց համար նախատեսված խորշերում և համապատասխան ձայնամեկուսիչ նյութերի օգտակործմամաբ նախատեսվում է ապահովել աղմուկի ցածր մակարդակ:

2.ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ

2.1 ՖԻԶԻԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հետազոտվող տարածքը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզ, Արմավիր քաղաքի Աշուղ Ջիվանու փողոց 12 հասցեում: Համաձայն անշարժ գույքի սեփականության վկայականի տարածքում քանդման ենթակա շինություններ չկան: Կից գտնվում են տնամերձ հողամասեր, Աշուղ Ջիվանու փողոցը, հասարակական շինություններ: Հարևանությամբ 16մ և ավել հեռավորությամբ գտնվում են այլ բնակելի հասարակական շենք շինություններ;

Տարածքում բնության և պատմամշակույթային հուշարձաններ չկան: Ծառաթուփային բուսականությունը բացակայում է:

<u>Գեոմորֆոլոգիական տեսակետից</u> ուսումնասիրվող տարածքը գտնվում է Երասխի ձախ ափին, Արարատյան դաշտում: Տվյալ տարածքում բարձրանիշերը տատանվում են՝ 860 -870 մետրերի սահմաններում :

<u>Շրջանի երկրաբանական պայմանները</u> Ըստ հորատման, ֆոնդային նյութերի և տարածաշրջանի մանրամասն տեղազննման շրջանի երկրաբանական կառուցվածքի ձևավորման գլխավոր գործոնը՝ ուսումնասիրության ենթակա ենթաշրջանների սահմաններում տարածված ամենահին բնահող-ապարները, ստորին չորորդականի և պալեոգենի հասակի գոյացումներն են

Վերնաշերտերում ամենալայն տարածքում մունեցող բնահողերը ներկայացված են գետա-լճային ծագման ավազա-կավային նստվածքներով, որոնք տարբեր հորիզոնների վրա շերտադասվում են ճալաքարա-ավազային շերտերով:

<u>Հիդրոերկրաբանական տեսակետից</u> Ուսումնասիրվող տարածքի ինժեներա-երկրաբանական պայմանների, մասամբ լանջային-գրավիտացիոն պրոցեսների զարգացման վրա ազդող կարևոր գործոններից են հանդիսանում ստորգետնյա ջրերը, որոնց ձևավավորումն ու բնույթը, իրենց հերթին ուղղակիորեն կախված է տարածքի ֆիզիկա-աշխարհագրական պայմաններից և երկրաբանա-լիթոլոգիական առանձնահատկություններից: Տարածաշրջանում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա, քանի որ հրաբխածին կազմավորումները բնութագրվում են ճեղքավորվածությամբ: Ուսումնասիրվող տարածքում մինչև 28.0գծ/մ խորությամբ փորված հորատանցքներում ստորգետնյա ջրեր չեն բացահայտվել և ըստ արխիվային նյութերի գտնվում են 28.0մ-ից ցածր հորիզոններում:

Տարածքի երկրաբանական նկարագրությունը

Տարածքի երկրաբանական կտրվածքը ուսումնասիրվել է հորատման եղանակով ֆոնդային նյութերի համադրմամբ, գրունտների լաբորատոր հետազոտությամբ: Ուսումնասիրվող տարածքում առանձնացվել է գրունտների չորս շերտ: Ստորև բերվում է այդ շերտի լիթոլոգիական նկարագրությունը և նրանց ֆիզիկա-մեխանիկական հատկությունները:

Շերտ-1Ասֆալտային շերտ, խճավազային շերտ

Հողաբուսական շերտ ավազակավի լցոնով: Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՍՆԻՊ IV-2-84-ի I (9ա) կարգ է:

Շերտ-2 Ավազակավեր բացից մինչև մուգ շագանակագույն, դարչնագույն, տեղ-տեղ մանրախճի պարունակությամբ, հոծ, մանրահատիկ: Էլյուվիալ-դելյուվիալ-պրոլյուվիալ առաջացումներ են: Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՍՆԻՊ IV-2-84-ի III (33գ) կարգ է:

Շերտ-3 Ալյուվիալ ծագման ճալաքարա նստվածքներ, 7-15% գլաքարով և մոտ 30-35% ավազի լցանյութով : Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՍՆԻՊ IV-2-84-ի (6գ) IV կարգ:

Շերտ-4 Ավազ սպիտակահողագույնից մինչև բաց շագանակագույն, կապտամոխրագույն, մանրախճային, միջին խտության, մանր, փոշենման: Էլյուվիալ-Դելյուվիալ-պրոլյուվիալ առաջացումներ են: Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՍՆԻՊ IV-2-84-ի II (27բ) կարգ է:

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիրի քաղաք Աշուղ Ջիվանու փողոց 12 հողամասի ինժիներաերկրաբանական ուսումնասիրությունների հաշվետվության եզրակացություն:

Կատարված հետազոտությունների և ստացված արդյունքների վերլուծությունը բերել են հետևյալ եզրակացության

- Տեղամասի երկրաբանական կառուցվածքը ներկայացված են գրունտների 4 շերտով,ավազների ֆիզիկամեխանիկական հատկությունների ընդհանրացված ցուցանիշները բերված են 6-13 էջերում:
- Տվյալ տարածքում գրունտային ջրերը ըստ հորատման տվյալների չեն բացահայտվել և ըստ ֆոնդային տվյալների գտնվում են 28մ-ից խորը հորիզոններում:
- Տեղամասում գրունտները բարենպաստ են շինարարական աշխատանքներ կատարելու համար որպես հիմնատակ առաջարկվում է
    - շերտ 1-ը /ալյուվիալ ծագման նստվածքներ/:
        - ✓ Դիմադրությունը R_0= 3.5կգ/սմ²
        - ✓ Ընկրկելիության գործակիցը $k_ը$= 4000տ/մ³
    - շերտ 2-ը /ավազներ մանր փոշենման /:
        - ✓ Դիմադրությունը R_0= 3.0կգ/սմ²
        - ✓ Ընկրկելիության գործակիցը $k_ը$= 3500տ/մ³
- Անհրաժեշտության դեպքում գրունտների սեյսմիկ հատկությունների ճշգրտումը (սեյսմիկ կարգ) կատարել երկրաֆիզիկական հետազոտությունների հիման վրա:
- ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկունության շինարարության նախագծման նորմեր»-ի ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի տարածքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, արագացման առավելագույն մեծությունը՝ Amax=0,3g:
- Գրունտի սառչման առավելագույն խորությունը, համաձայն ՀՀՇՆ 22.01.24 նորմերի, ուսումնասիրվող տարածքում կազմում է 70 սանտիմետր:
- Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը բացակայում են:
- Ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:
- Ուսումնասիրվող տեղամասում կառույցների հիմքերի փոսորակները բացելուց և նախագծային նիշերին հասնելուց հետո անհրաժեշտ է ինժեներ-երկրաբանի կողմից հիմնափոսի զննում և եզրակացության ներկայացում:

Երկրաբան՝ **Հ. Տիտիզյան**

Активация Wind
Чтобы активировать \
"Параметры"

2.2 Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Ծրագրի ազդեցության ենթակա և հարակից տարածքներում չկան ԲՀՊՏ-ներ՝ արգելոցներ, ազգային պարկեր, պետական արգելավայրեր կամ բնության գրանցված հուշարձաններ:

Արմավիրի մարզում է գտնվում բնության հատուկ պահպանվող տարածքը՝ Որդան կարմիր արգելավայրը, որը Հայաստանի Հանրապետության 27 արգելավայրերից մեկն է: Գտնվում է ծովի մակարդակից 900-950 մետր բարձրության վրա:

«Որդան Կարմիր» արգելավայրը ստեղծվել է Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության Մինիստրների խորհրդի 1987 թվականի փետրվարի 2-ի N61 որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի աղուտ հողերի վրա՝ Արազափ և Զրառատ բնակավայրերի վարչական տարածքում:

Համաձայն ՀՀ կառավարության 2003թ. հուլիսի՝ «ՈՐԴԱՆ ԿԱՐՄԻՐ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 830-Ն որոշման՝ զբաղեցնում է 219.85 հա տարածք:

Արգելավայրն ստեղծվել է աղուտներում բնակվող որդան կարմիր էնդեմիկ միջատից և Հայկական լեռնաշխարհում գրեթե 3 հազարամյակ օգտագործվել է որպես կարմիր ներկ: Պահպանության տակ են որդան կարմիրը և նրա հիմնական կերաբույսերը՝ աղադիմացկուն որդանխոտը և հարավային եղեգը:

Արմավիրի մարզի բնության հուշարձանների ցանկ

Ջրագրական հուշարձաններ		
1.	«Մեծամոր» լիճ	Արմավիրի մարզ, Տարոնիկ գյուղից մոտ 3 կմ հս-արմ
Կենսաբանական հուշարձաններ		
1.	«Ավազասեր(պսամոֆիլ) բուսականություն»	Արմավիրի մարզ, քաղ. Վաղարշապատ, Զվարթնոց տաճարի մոտ
2.	«Ջրաճահճային բուսականություն»	Արմավիրի մարզ, Մեծամոր լիճ

Պատմամշակույթային հուշարձանների ցանկ

Այս հոդվածը ներկայացնում է Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002 թ. հաստատվել է Հայաստանի կառավարության կողմից:

հուշարձան	**կառուցված**	**վայր, հասցե**	**կոորդ**	**համարանիշ**	**հավելյալ նշումներ**
Բնակատեղի	մթա 3 հզմ	2,5 կմ	—	**4.20/1**	Արմավիր-Արևիկ

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	հավելյալ նշումներ
«Մոխրաբլուր-Արևիկ»		աե			ճանապարհին
Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածների	1971	գ. մ.	—	4.20/2	քանդ.՝ Կառլեն Նուրիջանյան, ճարտ.՝ Լ. Նալբանդյան
Հուշարձան՝ Վահագնի	1971 թ.	գ. մ.	—	4.20/3	քանդ.՝ Կառլեն Նուրիջանյան

2.2 ԿԼԻՄԱՆ

Տեղամասի տարածաշրջանի կլիմայական պայմանների նկարագրության համար օգտագործվել է «ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» ՀՀ շինարարական նորմերը» փաստաթղթի տվյալները: Այդ փաստաթղթով սահմանում են կլիմայական հարաչափերը, որոնք կիրառվում են շենքերի և շինությունների, ջեռուցման, օդափոխու-թյան, օդի լավորակման, ջրամատակարարման համակարգերի նախագծման, ինչպես նաև քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծման և կառուցապատման ժամանակ:

Կլիմայի բնորոշման համար հիմք է վերցրվել մոտակայքում գտնվող Արմավիր օդերևույթաբանական կայանի երկարատև դիտարկման արդյունքները: Համաձայն օդերևույթաբանական կայանի տվյալների ուսումնասիրվող տարածքի կլիմայական շրջանը տաք է՝ շոգ ու չոր ամառով և ցուրտ ու անհողմ ձմեռով: Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը չի անցնում 254 մմ-ից, միջին տարեկան միջին խոնավությունը 60% է, օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը կազմում է +41.5°C, իսկ նվազագույնը՝ -31.4°C:

Օդի ջերմաստիճանը՝ ըստ ամիսների

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
Արմավիր	870	-4.1	-1.3	5.4	12.5	17.4	21.9	25.8	25.3	20.2	13.0	5.7	-0.8	11.8	-31.4	41.5

Օդի հարաբերական խոնավության բնութագիրը ըստ Արմավիր մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 2.2-ում:

Աղյուսակ

Օդի հարաբերական խոնավությունը՝ ըստ ամիսների

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը՝ ըստ ամիսների, %												Միջին տարեկան, %	Միջին ամսական	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		Ամենացուրտ ամսվա, %	Ամենաշոգ ամսվա, %
Արմավիր	75	70	62	56	56	50	46	47	51	61	70	76	60	75	46

Տեղումների բնութագիրը ըստ Արմավիր օդերևութաբանական կայանի տվյալների բերված է աղյուսակ 2.3-ում:

Աղյուսակ

Մթնոլորտային տեղումները

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Տեղումների քանակը $\frac{\text{միջին ամսական}}{\text{օրական առավելագույն}}$, մմ												Տարեկան	Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
Արմավիր	18	18	23	33	43	24	13	9	11	25	20	17	254	96	158
	19	21	26	30	47	21	38	31	35	30	28	20	47		

Քամու ակտիվությունը ռեգիոնում ըստ Արմավիր մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակում:

Քամի

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիություն, % ըստ ուղղությունների / Միջին արագությունը, մ/վ								Անդորի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս-օգոստոս ամիսներին	Միջին արագությունը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր-փետրվար ամիսներին	Միջին արագությունները ցցերությունների առավելագույնը ըստ ուղղությունների հոկտեմբերին, մ/վ
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ-արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս-արևմտյան						
Արմավիր	հունվար	7	5	17	8	9	8	28	18	77	0.5	Արլ	1.9	Հս Արմ	2.8
		2.2	2.2	1.9	1.9	1.8	2.3	2.5	2.8						
	ապրիլ	5	7	28	11	9	9	20	11	52	1.3				
		2.8	3.4	2.5	2.7	2.7	3.7	3.0	3.7						
	հուլիս	3	8	31	16	11	7	16	8	55	1.1				
		2.1	2.5	1.9	2.2	1.1	2.6	2.7	2.6						
	հոկտեմ-բեր	5	4	23	16	9	7	22	14	72	0.6				
		2.2	2.8	1.9	2.9	2.8	3.6	3.1	3.8						

2.3 ՕԴԱՅԻՆ ԱՎԱԶԱՆ

Օդային ավազանի աղտոտվածության մոնտորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Հաշվի առնելով այն, որ Արմավիր համայնքում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումները բացակայում են, սույն հայտում բերվում են օդային ավազանի ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքները:

ՀՀ բնակավայրերի՝ որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները, վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաների արժեքները ներկայացված են «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կայքում (http://meteomonitoring.am/page/1591) ըստ տվյալ բնակավայրի ազգաբնակչության թվաքանակի:

Համաձայն վիճակագրական տեղեկագրի՝ Արմավիր համայնքում բնակչության թվաքանակը կազմել է 65500 մարդ:

Ելնելով նշված թվաքանակից և ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքներից, Արմավիր համայնքում աղտոտիչների ֆոնային կոնցենտրացիաների արժեքները գնահատվում են հետևյալ տիրույթում. Փոշու մասնիկներ՝ 0,098 մգ/խմ, ածխածնի մոնօքսիդ՝ 1.3 մգ/խմ, ազոտի երկօքսիդ՝ 0,034 մգ/խմ և ծծմբի երկօքսիդ՝ 0,007 մգ/խմ:

2.4 ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՀՀ Արմավիրի մարզն առանձնապես հարուստ չէ ջրային ռեսուրսներով: Արմավիր քաղաքը գտնվում է Ախուրյան ջրավազանային կառավարման տարածքում: Մարզում է գտնվում հանրապետության ամենացածրադիր լիճը՝ Այղր (Ակնա) լիճը: Դարեր շարունակ օգտագործվել է որպես Արարատյան դաշտերի հողերի ոռոգման աղբյուր: Միակ գետը, որ սկսվում է մարզի սահմաններում և սկսվում է Ակնա լճից Մեծամորն է (Սևջուրը), սնվում Այղր լճից ու նրա մերձակա աղբյուրներից: Մեծամորի միակ խոշոր վտակը Քասախն է: Գարնանը սահմանային Արաքսի, ինչպես նաև Քասաղի հորդացած ջրերը դուրս են գալիս ափերից ու ավերածությունների պատճառ դառնում: Թուրքիայի հետ սահմանն անցնում է Արաքս գետով: Ռեսուրսների պակասը հիմնականում լրացվում է ստորգետնյա ջրային ռեսուրսներով: Համաձայն «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» (ՀՄԿ) ՊՈԱԿ-ի կողմից 2023թ. 3-րդ եռամսյակի տեղեկագրի՝ Մեծամոր գետի ջրի որակը Վաղարշապատ քաղաքից հարավ և Վաղարշապատ քաղաքից հարավ-արևելք հատվածներում օգոստոսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), Ռանչպար գյուղից ներքև հատվածում ջրի որակը օգոստոսին գնահատվել է «անբավարար» (4րդ դաս): Գործում են Ստորին Հրազդանի, Էջմիածնի, Մեծամորի և այլ ջրանցքներ: Հիդրոերկրաբանական տեսակետից տարածաշրջանը գտնվում է Արարատյան արևելյան ջրավազանում: Ստորերկրյա ջրերի սնուցումն իրականացվում է հիմնականում Արագած սարի հարավային լանջերից հոսող գետերի ենթահունային ջրերի հաշվին, ինչպես նաև միջլավային ջրերի հոսքի միջոցով: Ճնշումնային հորիզոնը տեղադրված է 150-200մ հասնող հավասար խորություններում, ունի բացասական ճնշում (հոսք): Քաղաքի և շրջանի տարածքում հանդիպում են նաև գրունտային ջրեր, որոնք սնվում են մակերևութային հոսքի, մթնոլորտային տեղումների, ենթահունային ջրերի և արտեզյան հորատանցքերի արտանետման ջրերից: Գրունտային ջրերը առավելագույն մակարդակի հասնում են ապրիլ մայիս ամիսներին, իսկ նվազագույնի՝ օգոստոս-նոյեմբեր ամիսներին: Գործունեության և հարակից տարածքներում մակերևութային ջրերը բացակայում են:

2.5 ՀՈՂԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Հողերը

Արմավիրի մարզի լանդշաֆտը ցածրադիր մասերում կիսաանապատային է, նախալեռնային շրջաններում՝ խայտաբղետ, կավաբեր, տեղ-տեղ աղակալված հողերը, կան նաև անապատային տեղամասեր:

Արաքսի և նրա վտակների փուխր բերվածքներում ձևավորվել են հումուսով աղքատ գորշ հողեր՝ բաց գորշագույն հողեր ու տիպիկ գորշահողեր՝ աղակալած տարածքներով, ցածրադիր ողողատներում՝ գերխոնավ հողերն ու ճահճուտները: Լճային նստվածքների հզորությունը հասնում է մի քանի տասնյակ մետրի:

Անապատի համար բնորոշ այս հողերի առաջացմանը նպաստել են կլիմայի չորությունը և բուսական ծածկույթի աղքատությունը: Բնորոշ են նաև բաց գորշագույն և գորշագույն հողերը, որոնք հիմնականում ոռոգվում են գյուղատնտեսական նպատակով: Այս գոտու լանդշաֆտների մեծ մասը վերափոխվել են ջերմասեր կուլտուրաների ագրոլանդշաֆտների: Արարատյան հարթավայրի արևմտյան մասում հանդիպում են աղակալած հողեր՝ ալկալահողերը: Տեղ-տեղ երևում են թաքիրներ՝ դեղնա-սպիտակավուն կավի ճաքճքած մակերեսով տարածություններ: Չոր ցամաքային կլիմայի պայմաններում գերակշռում են ֆիզիկական հողմնահարման պրոցեսները՝ պայմանավորելով քայքայված փուխր նյութերի կուտակումը և կենսանյութի արագ հանքայնացումը:

ՀՀ Արմավիրի մարզը գյուղատնտեսական ուղղվածության մարզ է, քանի որ գտնվում է հիմնականում Արարատյան դաշտի բարեբեր հողերի վրա: Մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 96 896.5 հա, որից վարելահողերը՝ 39764,1հա: Չմշակվող հողերը կազմում են 13 207.95 հա, որից աղակալած է 2 986 հա:

Մարզի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են ինչպես պտղաբուծության(ելակ, ծիրան, խաղող), բանջար-բոստանային մշակաբույսների արտադրության, այնպես էլ խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծության, խոզաբուծության և թռչնաբուծության համար:

Հայաստանի հանրապետությունում հողերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի համաձայն: Համաձայն «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2022թ. տարեկան ամփոփ տեղեկագրի՝ 2022 թվականի հողային ծածկույթի ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներն իրականացվել են Լոռի, Վայոց ձոր, Գեղարքունիք, Տավուշ, Կոտայք, Արարատ, Սյունիք, Շիրակ և Արմավիրի մարզերում:

Մարզ/ Քաղաք	Վանաձիում	Պղինձ	Ցինկ	Քրոմ	Նիկել	Արսեն	Կապար
	Գերազանցումը համապատասխան ՍԹԿ-ից, անգամ						
Տավուշ	1.3	14.7-35.0	5.9-8.4	7.3-16.2	8.0-10.3	4.0-19.5	-
Կոտայք	1.5-2.0	17.0-46.3	5.1-12.7	4.3-26.7	9.3-28	2.5-10	1.3-2.1
Արարատ	1.2	11.0-14.7	2.9-4.3	8.0-11.3	13.8-17.5	3.5-6.5	-
Վայոց ձոր	1.5-2.9	25.0-74.7	3.5-6.7	1.7-15.3	4.8-13.8	3.5-6.5	1.1-1.4
Լոռի	1.3-7.1	16.4-1760.3	2.6-55.9	1.7-16.2	2.9-19.3	2.5-37.9	1.1-27.6
Գյումրի	1.4-2.4	15.6-24.3	5.4-23.0	1.7-14.3	8.5-18.3	2.5-5	1.2-1.6
Վարդենիս	1.1-2.0	18.0-24.7	5.3-8.9	19.0-42.0	24.3-42	5.5-8.0	1.2-1.3
Մեծամոր	1.5	16.7	6.1	21.8	24.3	7.0	-
Արմավիր	1.1-2.5	20.7-28.7	6.8-9.7	14.2-65.2	32.5-41	4.0-6.5	1.4-2.4
Կապան	1.1-2.2	107.7-213.3	7.7-23.7	1.7-15.7	9.3-17	6.5-12	1.5-10.7
Քաջարան	1.5-1.6	230.3-966.0	6.3-18.5	1.7-7.0	7.0-7.3	10.0-11.5	1.6
Մեղրի	3.2	70.7	5.9	1.7	7.8	7.0	-
Ագարակ	1.8-2.7	140.3-220.3	5.1-11.0	1.7-8.8	4.8-10.5	3.0-5.0	1.3-1.4

2.6 ՀԻՄՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Նախատեսվող գործունեության նախագիծը ենթադրում է նաև հիմքերի փորման աշխատանքների իրականացում շենքերի կառուցապատման ընթացքում և հողային աշխատանքեր բացօթյա ավտոկայանատեղիի կառուցման փուլում: Ընդհանուր հողային աշխատանքերի ծավալը մոտ 8400 խմ ընդհանուր ծավալով փորման աշխատանքեր: Հանվող 4500 խմ ծավալով զանգվածը կտեղափոխվի Արմավիրի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր: Մնացած մասը կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում ապա կօգտագործվի որպես հետլիցք:

2.7 ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ

Տարածաշրջանի բնական լանդշաֆտը կիսաանապատային և լեռնատափաստանային է: Մարզում անտառածածկ տարածքներ չկան: Տարածքին բնորոշ են չորասեր ու աղասեր բույսերը: Համաձայն «Հայաստանի Հանրապետության Կենսաբազմազանության պահպանության, օգտագործման և վերարտադրության ռազմավարության և գործողությունների պետական ծրագրի» Արմավիրի մարզի տարածքում ՀՀ Կարմիր գրքում ներառված 24 բուսատեսակ և 86 կենդանատեսակ գտնվում են անհետացման եզրին:

Բուսական աշխարհ. մարզի տարածքը գտնվում է Երևանի և Արագածի ֆլորիստիկ շրջաններում, որոնց համար տիպիկ են Հայաստանի ֆլորայի 170-ից ավելի հազվագյուտ և անհետացող և 50-ից ավելի էնդիմիկ տեսակներ: Գերակշռում են կիսաանապատային չորասեր բուսատեսակները, իսկ ցածրադիր, ճահճապատ տարածություններում՝ եղեգնի մացառուտները: Տարածաշրջանում գրանցված են մոտ 130 բուսատեսակ, որոնցից որպես դոմինանտ կարելի է նշել հովվափողազգիներից (Alismataceae)՝ հովվափող լանցետային (Alisma lanceolatum), սովորական նետախոտը

(Sagittaria sagittifolia L.), եռատերև նետախոտը (Sagittaria trifolia L.), հովանոցազգիներից՝ ակտոնոլեմ խոշորաբաժակը (Actinolema macrolema), աննշմարակող անհարթապտուղը (Aphanopleura trachisperma), երնջակ Վանատուրի (Eringium vanaturii), աստղածաղիկազգիներից՝ վարդատերեփուկ մուշկայինը (Amberboa moschata), խոզանափուշ բարակը (Caucinia tenella), կանգար տուրնեֆորի (Gundelia tournefortii), կաթնուկ Թախտաջյանի (Lactuca takhtadzhianii), խաչածաղկավորներից՝ լրջուն թռչնակտուց (Isatis ornitorhynchus), ցախակեռասազգիներից՝ կտտենի, թանթրվենի Տիգրանի (Sambucus tigranii), մեխակազգիներից՝ փշատերևուկ ծակող (Acanthophyllum pungens), ալոխրուլա բունգեի (Allochrusa bungei), մեխակ Լիբանանի (Dianthus libanotis), թելուկազգիներից՝ բիեներցիա շուրջաթև (Bienertia cycloptera), օշան Թամամջյանի (Salsola tamamschjanae), սպանախ քառաեզ (Spinacia tetrandra), լոբազգիներից՝ գազ տարօրինակ (Astragalus paradoxus), հացիամեմ գլխիկավոր (Trigonella capitata), ֆրանկենազգիներից՝ ֆրանկենիա փոշապատ (Frankenia pulverulenta), բորակաթուփազգիներից՝ բորակաթուփ շոբերի (Nitraria schoberi), հացազգիներից՝այծակն հաստ (Aegilops crassa), ցորեն արարատյան (Tritiucum araraicum), կարմրանազգիներից՝ կարմրան (Tamarix), կարմրան ութառեզանի (Tamarix octandra), զուգատերևազգիներից՝ տետրադիկլիս բարալիկ (Tetradiclis tanella) և այլն:

Արմավիրի մարզում ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված է 26 տեսակներ:

Հայաստանի բույսերի կարմիր գրքում գրանցված հազվագյուտ և անհետացող տեսակներից մարզի տարածաշրջանում հանդիպում են աղուտների և կիսաանապատային բուսականության հետևյալ ներկայացուցիչները, մասնակիորեն՝ Օշան թաղիքային (Salsola tomentosa (Moq.) Spach), Սֆերոֆիզա աղուտային (Sphaerophysa salsula DC.), խնկեղեգ ճահճային(Acorus calamus L.), Շտերնբերգիա շնդեղածաղկային(Sternbergia colchiciflora Waldst. et Kit), Ակտինոլեմ խոշաբաժակ (Actinolema macrolema Boiss), Երնջակ Վանատուրի (Eryngium wanaturii Woronow), Վարդատերեփուկ Իլյինի (Amberboa iljiniana Grossh) և այլն:

Կենդանական աշխարհ: Կենդանական աշխարհը հարուստ է կաթնասուններով, թռչուններով, կրծողներով, սողուններով, խխունջներով և այլն: Հանդիպում են հարթավայրերին բնորոշ կենդանական աշխարհի ներկայացուցիչներ:

Տարածաշրջանում տարածված են 113 տեսակ ողնաշարավոր կենդանիներ, որոնցից 28 տեսակը կաթնասուն է, 67-ը՝ թռչուն, 15-ը՝ սողուն և 3-ը՝ երկկենցաղ: Տարածաշրջանում դոմինանտ և բնորոշ տեսակներից են Հայաստանում ամենուրեք տարածված Crocidura (սպիտակատամիկ), Vulpes vulpes L. (աղվե ս), Cricetus auratus Nat. (գերմանամուկ), Mucrotus arvalis Pall. (դաշտամուկ), Perdix perdix L.(կաքավ), Grus grus L. (կռունկ) և այլն:

Տարածաշրջանին բնորոշ ողնաշարավոր տարածքված կենդանիներից են՝ գայլը, աքիսը, եղեգնակատուն, ջրասամույրը, աղվեսը, կոնչան բադը, ճահճակուղբը, լճագորտը, մոխրագույն առնետը ժայռային մողեսը, սողուններից՝ սովորական լորտուն և միջատները: Անողնաշարավոր կենդանիներից հանդիպում են ծովախեցգետինը,

մրջյունը, մեղուն, ճռիկը, մորեխը, կաղամբաթիթեռը և այլն: Թռչունները ներկայացված են բաց տարածքներին բնորոշ տեսակներով՝ տնային ճնճղուկը, մոխրագույն ագռավը, կաչաղակը և այլն: Գարնան և աշնան սեզոններին այստեղ հանդիպում են բազմաթիվ չվանցող տեսակներ:

Տարածաշրջանի կիսաանապատներում հանդիպում են բազմաթիվ էնդեմիկ անողնաշար տեսակներ, ներառյալ միջերկրածովային, իրանական, կովկասյան և ղրիմյան ծագում ունեցողները: Աղուտային հալոֆիլ համակեցությունների հետ է կապված էնդեմիկ տեսակի՝ Արարատյան որդանի (Porphirophora hamelii) գոյությունը:

Տարածաշրջանին բնորոշ էնդեմիկ կենդանիներից է՝ հայկական որորը (Larus armeniacus But.), Մեղու Դեսպտորիա(Megachile deseptoria Peres): Տարածաշրջանում հանդիպող ՀՀ Կարմիր Գրքում գրանցված կենդանիների տեսակներից հանդիպում են, մասնակիորեն՝ հարավային պայտաքիթը 30 (Rhinolophuseuryales), վարդագույն հավալուսն(Pelecanus onocrotalus), քաջահավ (Plagadis falcinellus Linneaus), փոքր ձկնկուլ(Phalocrocorax pygmaeug Linneaus), Ուբադչի ճպուռ (Gomphus ubadschii Schmidt), Սատունինի սկոտոդրիմադուզա(Scotodrymadusa satunini), Հայկական բնդեռնիկ (Glaphyrus calvaster Zaitzev), Սև անգղ(Aegipus monachus), Տափաստանային մկնաճուռակ(Circus macrourus) և այլն:

Դիտարկվող տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը, առկա է տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ, ինչի պարագայում կենդանատեսակների և բուսատեսակների հանդիպելը գրեթե բացառվում է:

2.8 Թափոնների կառավարում

Արմավիրի տարածքում աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր:

Շինարարական աշխատանքերի ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ/բացառությամբ խոշոր եզրաչափերի /ծածկագիրը՝ /ծածկագիրը՝ 9120040001004/՝ 17,1 տ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, և 240 խմ շինարարական աղբը /ծածկագիրը՝ 9120060101004/(այդ թվում տարածքում առկա շինությունների քանդումից առաջացող), ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից շինթույլտվությամբ հատկացված վայր:

2. Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող (ծածկագիրը՝ 31401100 08 99 5) 4500 խմ ծավալով, կտեղափոխվի

Արմավիր համայնքի կողմից տրամադրվող շինարարության թույլտվությամբ սահմանված վայր:

3. Եռակցման աշխատանքերից առաջացող «Եռակցման խարամ» 0,35տ շին. ընթացքում: Ծածկագիրը՝ 3140480001994: Վտանգավորության դասը՝ 4:

4. «Յուղոտված լաթեր»: Ծածկագիրը՝ 5820060001014: Վտանգավորության դասը՝ 4: Թափոններն առաջանում են սարքավորումների և այլ տեխնիկական միջոցների շահագործման և վերանորոգման ընթացքում: Յուղոտված լաթերի կուտակումն անհրաժեշտ է իրականացնել բետոնե կամ խճաքարով պատված հարթակում, որը կահավորված է շրջակա միջավայր յուղերի արտահոսքը կանխող սարքավորանքով: Թափոնի գոյացման չափաքանակը հավասար է 0.12 շին.ընթացքում:

Շահագործման փուլում կառաջանա կենցաղային աղբ, որը պայմանագրային հիմունքներով աղբահավաք ծառայության կողմից կհեռացվի համայնքային աղբավայր:

Գործունեության ընթացքում «Թափոնների մասին» օրենքի պահանջով կիրականացվի գոյացող, օգտագործվող, այլ անձանց կամ լիցենզավորված կազմակերպության փոխանցվող, ինչպես նաև տեղադրվող թափոնների սկզբնական հաշվառում:

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետական նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարական հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շինարարական հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

3.1 ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների ընթացքում փոշու արտանետումներ;

- հողային զանգվածների տեղափոխման ժամանակ փոշու արտանետումներ;

- շինարարական տեխնիակայի շահագործումից արտանետվող ծխագազեր;

- Զողման աշխատանքերից ազոտի և ածխածնի օքսիդի աէրոզոլների և այլ արտանետումներ,

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

3.2 ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում;

- փոշու արտանետումներ հողային աշխատանքերի ընթացքում;

- վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ (CO, NOx):

3.3 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

3.3.1 ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,

- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաորում:

- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականցվի փակ ծածկով մեքենաներով.

- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:

3.3.2 ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,

- անձրևվների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը ինչպես նաև անվադողերի լվացումից առաջացող հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Պարզարանը գտնվում է շինարարական հրապարակին կից ցածրադիր հատվածում, իրենից ներկայացնում է պլաստմասե 2 հատ 100խմ ծավալով տարողություններ, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 4000 քմ մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:

3.3.3 ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական գործընացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ, ինչպես նաև ներգրավվի ժամանակակից տեխնիկականն միջոցներ:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- Տարածքում առկա հողի բերրի շերտը կօգտագործվի տարածքի կանաչապատման և բարեկարգման աշխատանքերի ընթացքում:
- Տարածքում առկա հողի բերրի շերտը պահպանելու նպատակով նախատեսվում է առաջնորդվել ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի թիվ 1396-Ն որոշմամբ հաստատված Հողի բերրի շերտի օգտագործման կարգով և 02.12.2017թ.-ի թիվ 1404 որոշմամբ, մասնավորապես նախատեսել հետևյալ միջոցառումները.
    - Հողի բերրի շերտը 650 խմ ծավալով հանել և պահպանել ծածկված վիճակում՝ բացառելով շինարարական աշխատանքների հետևանքով դրա աղտոտումը:

- Հողային աշխատանքների կատարման ընթացքում չօգտագործված հողի հանված բերրի շերտն անմիջապես դարսվում է լայնակույտերով:
- Լայնակույտերի բարձրությունը և ձևը պետք է բացառի հողատարման գործընթացների զարգացումը:
- Եթե հողի հանված բերրի շերտը նախատեսվում է պահել 2 տարին գերազանցող ժամկետով, ապա, ողողումը և հողմատարումը կանխելու համար, լայնակույտերի մակերևույթն ու թեքությունները ամրացվում են խոտացանքով կամ այլ եղանակներով: Թույլատրվում է լայնակույտի թեքությունների վրա ցանքսը կատարել հիդրոեղանակներով:
- Լայնակույտերը տեղադրվում տարածքում՝ բացառելով լայնակույտերի ջրածածկումը, աղակալումը, արդյունաբերական թափոններով և կոշտ առարկաներով, քարերով, խճով, ճալաքարով ու շինարարական աղբով աղտոտումը:

3.3.4 ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ

- Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, որը կներկայացվի Արմավիրի քաղաքապետարանի համաձայնեցմանը: Զրոյական նիշում կանաչապատ մակերեսը կազմում է 4300,1 քմ:
- Կանաչապատ տարածքների ներքին ոռոգման ցանցը նախատեսվում է կաթիլային:
- Տարածքում նախատեսվում է տնկել թղկի սրտատերեվ կարմիր - 27 հատ, Գնդաձեվ իլենի – 14 հատ, Գնդաձեվ թույա - 18 հատ, Բարբարիս - 9 հատ, Ասպիրակ - 12 հատ, Ֆորզիցիա - 36 հատ, Խենոմելիս - 19 հատ, Սամշիտ - 450 գծմ, Եղեվնի կովկասյան - 10 հատ, Թզուկ վարդեր - 500 քմ, Սիզամարգ – 4000քմ:
- կանաչապատման աշխատանքներն իրականացնելիս առաջնորդվելով ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշման դրույթներով:

3.3.5 ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում նախատեսվում է հրշեջ հիդրանտի տեղադրում):
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղ-արկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- Շինարարական հրապարակում տեխնիկական միջոցների լիցքավորման ժամանակ պահպանել հրդեհային անվտանգության կանոնները:
- Շինարարական աշխատանքների ժամանակ՝

ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ

հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն։

- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
- բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:
- Նախատեսվող բնակելի համալիրում առկա վտանգավոր օբյեկտները «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով կներկայացվեն տեխնիկական անվտանգության փորձաքննությունների;
- Անվտանգության նկատառումներից ելնելով շին.հրապարակում կտեղադրվեն կողմնակի անձանց մուտքը արգելող նշաններ, և շինհրապարակը կապահովվի լուսավորությամբ:
- իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում ղեկավարվել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

Ըստ նախնական գնահատման, ապահովելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների և առողջապահական ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

3.3.6 ԱՂՄՈՒԿԻ և ԹՐԹՌՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 80 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն): Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում: Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը, աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ: Շինարարության ընթացքում շին հրապարակում աշխատելու են տարբեր մեքենաներ և մեխանիզմներ, որոնց աղմուկի մակարդակի գումարային ազդեցությունը հնարավոր է գերազանցի սահմանված նորմերը: Սակայն դա լինելու է ոչ անընդմեջ, ժամանակավոր: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցերեկային ժամերին: Աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով հայտում նախատեսվում են համապատասխան բնապահպանական միջոցառումներ, որոնց կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը: Շինարարության փուլում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին, - կառուցապատման տարածքում ձայնակլանիչ նյութերի և կոնստրուկցիաների կիրառում,
- շինարարական աշխատանքներում ներգրավվելու են ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ,
- տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործել սարքին վիճակում,
- պարբերաբար կստուգվեն և կկարգաբերվեն տրանսպորտային միջոցների շարժիչները,
- բացառել շինարարության ընթացքում օգտագործվող մեքենաների կայանումը բնակելի տների, այլ հասարակական շենքերի հարևանությամբ,

- օգտագործվող շին տեխնիկան և մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով,

- պահպանել աղմուկի, վիբրացիայի, արտանետվող գազերի թույլատրելի նորմերը, կատարել չափագրում,

- շինհրապարակում աղմուկի մակարդակը գերազանցելու դեպքում աշխատողներին ապահովել ականջակալներով: Շահագործման փուլում բնակելի շենքում նախատեսվում է.

- օդափոխման և օդի լավորակման համակարգերում աղմուկի խլացուցիչների կիրառում,

- օգտագործվող ձայնամեկուսիչ, ձայնակլանիչ, թրթռամարիչ նյութերի օգտագործում՝ առաջնորդվելով համապատասխան մարմինների եզրակացություններով:

Թրթռում

Թրթռման նորմաները բնակելի շենքերում ըստ ՀՀ առողջապանության նախարարի 17 մայիսի 2006թ. N533-Ն որոշման, ներկայացված են ներքոնշյալ աղյուսակում:

Հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) թույլատրելի մակարդակները

Միջին երկրաչափական հաճախականության օկտավային շերտեր, Հց	Թույլատրելի արժեքները XO YO և ZO առանցքներով			
	Թրթռման արագացում		Թրթռման արագություն	
	մ/վրկ2 .10-3	դԲ	մ/վ .10-3	դԲ
2	10.0	80	0.79	84
4	11.0	81	0.45	79
8	14.0	83	0.28	75
16	28.0	89	0.28	75
31.5	56.0	95	0.28	75
63	110.0	101	0.28	75
Ճշգրտված ու համարժեքային ճշգրտված արժեքները և դրանց մակարդակները	10	80	0.28	75
Ոչ մշտական թրթռման (վիբրացիայի) համար թույլատրելի արժեքներին մտցվում է ուղղում - 10դԲ, իսկ բացարձակ արժեքները բազմապատկվում են 0,32-ով: Դպրոցների սենքերի, ուսումնական հաստատությունների, գրադարանների ընթերցասրահների համար մտցվում է ուղղում -3դԲ:				

Ոչ մշտական թրթռման (վիբրացիայի) համար թույլատրելի արժեքներին մտցվում է ուղղում - 10դԲ, իսկ բացարձակ արժեքները բազմապատկվում են 0,32-ով: Դպրոցների

սենքերի, ուսումնական հաստատությունների, գրադարանների ընթերցասրահների համար մտցվում է ուղղում -3դԲ:

Շինարարության ընթացքում թրթռման աղբյուր են հանդիսանում շինտեխնիկայի աշխատաքը, որոնց թրթռման մակարդակը ցածր է, և արդեն իսկ շինհրապարակի սահմաններում ալիքը մարում է և չի կարող ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա:

4. Շահագործման փուլ

4.1Արտանետման աղբյուրներ

Շահագործման փուլում արտանետման աղբյուրներ չկան, ջեռուցումը նախատեսվում է անհատական էլեկտրական սարքերով:

4.2Արտահոսքեր

Շահագործման փուլում առաջացող կենցաղային հոսքաջրերը կհեռացվեն Վեոլիա ջուր ՓԲԸ կոյուղու համակարգ:

4.3 Աղմուկ

Տեղադրվող տեխնիկական սարքավորումները համաձայն տեխնիկական անձնագրում ներկայացված աղմուկի ցուցանիշների պետք է գտնվեն թույլատրելի նորմերի սահմաններում:

4.3 Թափոններ

Շահագործման փուլում կառաջանա կենցաղային աղբ: Տարածքում նախատեսվում է տեղադրել աղբի տեսակավորման աղբամաններ, տարածքում բացառվելու է աղբի կուտակումը, այն ամենօրյա ռեժիմով պայմանագրային հիմունքներով կհեռացվի աղբահավաք ծառայության կողմից համայնքային աղբավայր:

5. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ

Բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ;
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ;
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ;

4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
5. Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների,
6. Կառուցապատման տարածքի և հարևան տարածքների կենսաբազմազանության մոնիթորինգ 3 ամիսը մեկ հաճախականությամբ:
7. Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար, չորացած տեսակները փոխարինի նորերով:
8. կանաչապատման աշխատանքներն իրականացնելիս առաջնորդվելով ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշման դրույթներով:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարաության ընթացքում հատկացնել 2520000 դրամ:

Մշտադիտարկում և բնապահպանական միջոցառումներ, շին. փուլ/ դրամ		
Տարածքի ջրցան փոշեգոյացումը կանխելու նպատակով	300000	300000
Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ;	36x45000	1620000
Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:	12x35000	420000
Կենսաբազմազանության մոնիթորինգ	12*15000	180000
Ամբողջ շինարարության համար		2520000

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախազգուշացումներ և աշխատողների անվտանգություն	(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ (b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել (c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա: (d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) (e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	(a) Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարողություններ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համար Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով (b) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով (c) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի: (d) Շինարարության ընթացքում համաձայն մթնոլորտային օդի պահպանության մասին օրենքի, փոշեգոյացումը կանխելու նպատակով շենքերը կծածկվեն անթափանց թաղանթով
	Աղմուկ	(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում (b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն:

	Թափոնների կառավարում	(a) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր: (b) Շինարարակամ աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից (c) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն
Կեղտաջրերի հեռացում	Ջրի որակ	(a) Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով ավտոցիստեռներով: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:, (b) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն նախատեսված տարածքներում, որտեղից ջրի արտահոսք չի լինի: (c) Շինհրապարակից ելքի ժամանակ ճնշումայնի ջրով (կարչեր) լվացվում են տեխնիկական միջոցների անվադողերը: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:
Հետիոտների և երթևեկության ապահովություն	Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ	(a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով. ▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ ▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության զոնայում: ▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին: ▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուդարձի համար. ▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների

		ընթացքում:
Արտակարգ իրավիճակների կառավարում	Շինարարական աշխատանքների հետևանքով արտակարգ իրավիճակների կառավարում	- Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում; - Շինարարական բոլոր տեղամասերում անհրաժեշտ է ապահովել արտակարգ պատահարների դեպքում կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը; - Շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, հրշեջ հիդրանտներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն: - Մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար: - Հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում՝ ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ - Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագություն, անհողմություն, մառախուղ) դեպքում աշխատանքներն իրականացնել պահպանելով անվտանգության բոլոր կանոնները կամ շին. աշխատանքները դադարեցնել մինչ օդերևութաբանական պայմանները կլինեն բարենպաստ աշխատանքները վերսկսելու համար:
Կենսաբազմազանություն	Ծառաթփային բուսականության վրա ազդեցություն	Տարածքում աշխատանքներն իրականացնելիս առաջնորդվել ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներով: - Բուսականության պահպանում և կառավարում Անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել հարակից տարածքներում ազդեցության ենթարկված բուսականության ջրցանման միջոցառումներ՝ բուսականության վրա նստած փոշին հեռացնելու նպատակով; - Անհրաժեշտ է ապահովել տարածքում առկա բուսականության (եթե առկա են) ոռոգման միջոցառումները շինարարության ընթացքում: Անհրաժեշտ է բացառել տարածքում այն ծառերի(եթե դրանք առկա են)և թփերի հատումը, որոնք նախագծի համաձայն ազդեցության չեն ենթարկվում
	Կենդանական աշխարհի վրա ազդեցություն	- Կենդանական աշխարհի պահպանում և կառավարում - Հողային կամ շինարարական աշխատանքների ժամանակ հայտնաբերված կենդանական աշխարհի բնադրավայրերի և/կամ միգրացիոն ուղիների դեպքերը գրանցվեն, տեղեկատվությունը տրամադրվի պատասխանատու մարմիններին, որոշումներ կայացվեն դրանց պահպանմանը կամ փոփոխմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	- Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի զննում և կարգաբերումն - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում	- Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	- Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում: -Այն տեխնիկական միջոցները որոնք հնարավոր չէ մոտեցնել մասնագիտացված կետեր	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու

	սպասարկման և լիցքավորման նպատակով կսպասարկվեն շինարարական հրապարակում հատուկ սարքավորված տեխնիկական միջոցների կիրառմամբ:				
Հողային աշխատանքներ	- Հանված հողերը հեռացվում են համայնքի կողմից հատկացված վայր	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	Կապալառու
Ներտ շինանյութերի գնում	- Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից	Ներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում	Մատակարարման ընթացքում	Կապալառու, մատակարար
Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ	Շինհրապարակ	Արտաքին զննում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալառու, քաղաքապե-տարանի վերահսկողություն
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու
Կանաչապատում	Տեղանքին բնորոշ ծառաթփային բուսականության տնկում	Սեփական տարածք	Արտաքին զննում	մշտական	Կապալառու
Կենսաբազմազանություն	Սեփական տարածքի և շինհրապարակի հարակից տարածքի ազդեցության ենթարկված	Ազդեցության չենթարկված սեփական և	Արտաքին զննում	Եռամսյակ	Կապալառու

	բուսականության մշտադիտարկում	հարակից տարածք			

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
2. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
3. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохранных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ